

ԿԱՐՄԵՑՑԱԼ ՍՏԵՓԱՆՈՍ ՍՅՈՒՆԵՑԻ ՇԱՐԱԿԱՆԱԳԻՐ
V ԴԱՐԻ

Լ. Գ. ՍԱՐԳՍՅԱՆ

«Շարականացում» պահպանվել է միջնադարյան հոգևոր երգերի մի կանոն՝ նվիրված Քրիստոսի հարությանը, անվանված Հարության ավագ օրհնություններ: Հայ հին ու միջնադարյան գրականության ուսումնասիրությամբ զբաղված գրեթե բոլոր հայագետներն անդրադարձել են այս կանոնի շարականներին, համառոտ կամ ծավալուն քննությամբ արժեքավորել դրանք: Ուսումնասիրողներին միավորել է դրվատական կարծիքը շարականների գեղարվեստական արժանիքներն ու ամբողջությամբ վերցրած՝ կանոնի կառուցվածքային ինքնատիպությունը գնահատելիս: Սակայն շարականների հեղինակային պատկանելության հարցը երկար ժամանակ տարակարծությունների տեղիք է տվել, մինչև այսօր էլ մնացել չլուծված: Բանասիրության մեջ ավելի հաճախ շարականների հեղինակ համարվել է VIII դ. հայտնի մշակութային գործիչ Ստեփանոս Սյունեցին, երբեմն՝ V դ. համանուն մի մատենագիր՝ Սահակ Պարթևի ու Մեսրոպ Մաշտոցի կրտսեր աշակերտներից:

Առաջինը Մ. Չամչյանն էր, որ, վկայակոչելով մատենագրական մի քանի տեղեկություններ, անդրադարձավ V դ. Ստեփանոս Սյունեցու խնդրին և արձանագրեց այդպիսի մի պատմական անձի գոյությունը, միաժամանակ հավաստելով, թե նա է կանոնի շարականների հեղինակը¹: Այնուհետև նույն կերպ վարվեցին շարականագիրների միջնադարյան ցուցակի «անանուն» կոչվող խմբագրության հեղինակն² ու «նոր բառգիրք Հայկազեան լեզուի» կազմողները³:

Սակայն ուշ շրջանի մեծ թվով բանասերներ, մատենագրական այլ, առավել հավաստի տեղեկություններ հիմք ընդունելով, շարունակեցին կանոնի շարականները դիտել որպես VIII դ. Ստեփանոս Սյունեցու ստեղծագործություններ⁴, առանց անդրադառնալու Մ. Չամչյանի եզրահանգումներին, միայն երբեմն կտրուկ հերքելով դրանք⁵:

1 Մ. Չամչյան, Պատմութիւն հայոց, հ. Ա, Վենետիկ, 1784, էջ 780—782:

2 Հ. Անասյան, Հայկական մատենագիտություն, հ. Ա, Երևան, 1959, էջ LXVIII,

3 Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, հ. Ա, Վենետիկ, 1836, էջ 19:

4 Տե՛ս Ղ. Ալիշան, Սխական, Վենետիկ, 1893, էջ 23, 123, նույնի՝ Ցուղիք հայրենաց հայոց, Վենետիկ, 1922, էջ 279, Գ. Զարբհանալեան, Հայկական հին դպրութեան պատմութիւն, Վենետիկ, 1897, էջ 494—495, Գ. Խաչկոնց, Հայոց կրօնական բանաստեղծութիւն, Քիֆլիս, 1904, էջ 43, Ս. Ամատունի, Հին և նոր պարականոն կամ անվանի շարականներ, Վաղարշապատ, 1911, էջ 60—61, Մ. Օրմանյան, Ազգապատում, Կ. Պոլիս, 1912, էջ 864—865, Ա. Զամինյան, Հայ գրականության պատմություն, մաս Ա, Նորնախիչեան, 1914, էջ 179, Ե. Դուրեան, Պատմութիւն հայ մատենագրութեան, Երուսաղեմ, 1933, էջ 144:

5 Այս առումով թերևս միակ բացառությունը Մ. Բրոսեն է, որ քիչ թե շատ ծավալուն անդրադառնում է V դ. Ստեփանոս Սյունեցու գոյության խնդրին և ժխտում Մ. Չամչյանի եզրահանգումները (տե՛ս Histoire de la Siounie par Stepannos Orbelian, traduite de l'armenien par M. Brosset, second livraison, introduction, S. Petersburg. 1866, p 44, 49, և այլն): Մ. Բրոսենի համամիտ է ն. Ակինյանը, որը ես վարձառոտ հերքելով V դ. Սյունեցու գոյությունը, հղում է Մ. Բրոսեի աշխատության նշված էջերը (տե՛ս Հանդես ամսօրյա, 1903, թիվ 8, էջ 249—250):

Այս պարագայում, ահա, զարմանալի շէր, որ բանասիրության մեջ ձևավորվեց մի երրորդ խումբ էլ, որն արձանագրեց իր անորոշ կարծիքը թե շարականների ստեղծման ժամանակի, թե հեղինակի վերաբերյալ⁶։

Ինչպես նշեցինք, տարակարծությունները շարունակվում են մինչև օրս։ 1973 թ. երաժշտագետ Ն. Թահմիզյանը «Էջմիածին» ամսագրում տպագրում է մի հոդված, որը հավակնում էր վերջնական պատասխան տալ հարցին և Մ. Չամչանից հետո փաստորեն երկրորդ հանգամանակից խոսքն էր այս կապակցությամբ⁷։ Ավելին, եթե Մ. Չամչանը սահմանափակվել էր V դ. կարծեցյալ Սյունեցու գոյությունը մատնանշող մատենագրական հաղորդումները վկայակոչելով, երաժշտագետը կատարում է նաև դրանց քննությունը և, հավելելով մի քանի լրացուցիչ փաստարկներ, եզրակացնում, որ նշված շարականները հորինել է ռամենայն հավանականությամբ՝ սահակ-մեսրոպյան կրտսեր աշակերտներից մեկը, Սյունիքի Ստեփանոս անունով առաջին եպիսկոպոսը⁸։ 1980 թ. հրատարակած իր գրքում Գր. Հակոբյանը, նորից միայն կարճառոտ հերքելով V դ. Ստեփանոս Սյունեցու գոյությունը, կանոնի շարականները համարում է VIII դ. Սյունեցու ստեղծագործություններ և քնննում ըստ այդմ⁹։ Շուտով՝ 1982 թ., երաժշտական մի ժողովածուում այս շարականներից հատված է տպագրվում V դ. Ստեփանոս Սյունեցու անունով¹⁰, որի գոյությունն այնուհետև վավերացվում է Հայկական Սովետական Հանրագիտարանում¹¹։

Խնդրո առարկա շարականների հեղինակային պատկանելության հարցը, ինչպես երևում է, չի սպառվում երկու համանուն հեղինակների շփոթում միայն։ շփոթի դեպքում կյանքի է կոչվում նաև մի պատմական անձ, որի գոյությունը հավաստող Մ. Չամչանի վկայակոչած մատենադրական տեղեկությունները, ինչպես նաև հայագետի եզրահանգումները խիստ երկբայելի են, ուրեմն և՛ նոր քննության ու լուսաբանման կարոտ։

Միջնադարյան մատենագիրները, որոնց աշխատություններից V դ. Ստեփանոս Սյունեցու մասին տեղեկություններ է քաղել Մ. Չամչանը, չորսն են՝ Կիրակոս Գանձակեցի (XIII դ.), Հայսմավուրքի խմբագրող (XIII դ.), Թովմա Մեծոփեցի (XV դ.) և Ղազար Ջահկեցի (XVIII դ.)։ Անդրադառնանք նրանց առանձին-առանձին։

Կիրակոս Գանձակեցին «Պատմություն հայոց» աշխատության առաջին էջերում, խոսելով V դ. թարգմանիչների մասին, տալիս է մի ցուցակ, որի մեջ հիշատակվում է մի Ստեփանոս Սյունեցի։ Ցուցակը բավական ծավալուն է, ուստի մեջբերում ենք նրա լինչին մասը. «...Արձան, խոսրով, Ղազար և յետոյ Ստեփանոս Սիւնեաց եպիսկոպոս, և որ զգիրսն յարնարէր զեղեցիկ՝ Հռոփանոս Սամոստացի»¹²։ Ընդգծված «և յետոյ» բառերը Ստեփանոս Սյունեցի եպիսկոպոսին որոշակիորեն առանձնացնում են մյուս թարգմանիչներից։ Սակայն թարգմանչաց շարքում այս Ստեփանոս Սյունեցու հիշատակության փաստն ինքնին դիտվել է այնքան վճռորոշ, որ V դ. Սյունեցու գոյու-

6 Հմմտ. Հ. Կ. Փիսկան, Պատմություն հայ գրականության, Առաջին մաս, Վենետիկ, 1944, էջ 200—201, Մ. Գրիգորյան, Ստեփանոս Սիւնեցի, Պէյրուք, 1958, էջ 44։

7 Ն. Թահմիզյան, Սյունեցի համանուն երկու երաժիշտներ և Հարուստի ավագ օրհնությունները (Էջմիածին, 1973, № 2)։

8 Նույն տեղում, էջ 37։

9 Գր. Հակոբյան, Շարականների ժանրը հայ միջնադարյան գրականության մեջ, Երևան, 1980, էջ 148—156։

10 Ոսկեփորիկ, հայ երգի գոհարներ, կազմող և խմբագրող Ն. Թահմիզյան, Երևան, 1982, էջ 15։

11 Հայկական Սովետական Հանրագիտարան, հ. 11, Երևան, 1985, էջ 137—138։ Հոդվածի հեղինակն է Ն. Թահմիզյանը։

12 Կիրակոս Գանձակեցի, Պատմություն հայոց, աշխատառիթմային Կ. Մե-լիթ-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 28։

թյունն ընդունողները կամ լուելյան անտեսել են «և յետոյ» բառերը, կամ աշխատել ժխտել դրանց ժամանակատարբերիչ նշանակությունը: Այսպես, Մ. Չամչյանը Գանձակեցու այս հատվածը մեջբերում է առանց «և յետոյ» բառերի՝ ստեղծելով տպավորություն, թե Գանձակեցին հաստատապես հիշում է V դ. մի Ստեփանոս Սյունեցի եպիսկոպոսի¹⁵: Նկատենք, սակայն, որ Ստեփանոս Սյունեցին ցուցակում վերջինը չէ, ուստի նրա անվան կողքին «և յետոյ» բառերի գործածությունը ոչ մի կերպ չի կարելի բացատրել ոճական նկատառումներով: Մենք է «և յետոյ» բառերն ընդունել իրենց ուղղակի և ըստ էության միակ նշանակությամբ՝ զբանցով Գանձակեցին Ստեփանոս Սյունեցուն ժամանակով առանձնացնում է մյուս թարգմանիչներից:

Նույն՝ թարգմանչաց վերաբերող պարբերության մեջ Գանձակեցին մի քանի տող հետո նորից է հիշում Ստեփանոս Սյունեցուն՝ վերջինիս մատենագրական երկերի կապակցությամբ. «Եւ յետոյ մեծն Ստեփանոս Սիւնեաց եպիսկոպոս, բաղում մեկնութիւնս զորոց սրբոց եթող՝ Աւետարանացն համառօտ, և Յոբայ, և Դանիէլի, և Եղեկիէլի, և զպատասխանիս թղթոյն Գերմանոսի պատրիարքի Կոստանդնուպօլսի»¹⁶: Այստեղ թվարկված երկերի հեղինակը հաստատապես VIII դ. Ստեփանոս Սյունեցին է, Գանձակեցին ևս գիտի այդ¹⁶: Ուրեմն՝ նա VIII դ. մատենագիրն V դ. թարգմանչաց շարքում հիշում է՝ նրա և ինքնուրույնը, և ժամանակը ստույգ իմանալով, ինչպես նաև նրան երկու դեպքում էլ միևնույն ձևով («և յետոյ») առանձնացնելով մյուսներից: Ն. Թաճմիզյանն էլ չի տարակուսում, ոք երկրորդ անգամ հիշված այս Սյունեցին VIII դ. համանուն մատենագիրն է. երաժշտագետն ընդունում է նաև, որ այս երկրորդ հատվածում Սյունեցու կապակցությամբ գործածված «և յետոյ» բառերով «փաստորեն երկու պատմաշրջաններ են զատորոշվում»՝ V և VIII դդ.¹⁸: Իսկ թե առաջին հատվածում նույն Սյունեցու առթիվ գործածված նույն «և յետոյ» բառերը ինչպես կամ ինչու են ըստ երաժշտագետի կորցնում իրենց «ժամանակատարբերիչ նշանակությունը», որով և առաջին հատվածի Սյունեցին «մնում է» V դարում, մեզ հասկանալի չէ: Այդ հատվածի «և յետոյ» բառերին երաժշտագետի տված մեկնաբանությունը, թե «քանի որ հեղինակի (իմա՝ Գանձակեցու—Լ. Ս.) մտքերի շարունակությունը ևս ամբողջությամբ վերաբերում է թարգմանչաց շրջանին, որով պարզապես կորչում է «և յետոյ» խոսքի ժամանակատարբերիչ նշանակությունը»¹⁷, բռնազրոսիկ է: Նախ՝ նույն հիմունքով կարելի էր ժխտել նաև երկրորդ հատվածի «և յետոյ» խոսքի ժամանակատարբերիչ նշանակությունը, ապա՝ չէ՞ որ Գանձակեցու «մտքերի շարունակության» մեջ երկրորդ անգամ հիշված Ստեփանոս Սյունեցին հաստատապես VIII դ. հեղինակ է, ինչը ստույգ գիտի Գանձակեցին: Եվ եթե V դ. թարգմանչաց վերաբերող պարբերության մեջ հիշված է VIII դ. մատենագիրը, որի ապրած ժամանակը հայտնի է Գանձակեցուն, ապա ո՞ւր է մնում պատմիչի «մտքերի շարունակությունը» իբր թե «ամբողջությամբ» V դ. թարգմանչաց վերաբերելու Թաճմիզյանի համոզումը, որի հիմամբ էլ նա փորձում է ժխտել «և յետոյ» բառերի ժամանակատարբերիչ նշանակությունը:

Մ. Չամչյանը և Ն. Թաճմիզյանը համոզված են, որ թարգմանչաց պարբերության մեջ երկու անգամ հիշատակելով Ստեփանոս Սյունեցուն, Գանձակեցին շփոթում է V և VIII դարերում ապրած երկու համանուն հեղինակներին¹⁸: Արդյո՞ք այդպես է: Արդեն ասվեց, որ Սյունեցիներից մեկին՝ VIII դ. մատենագիրն Գանձակեցին գիտի որոշակիորեն: Անորոշ-անժանոթը մյուսն

¹⁵ Մ. Չամչյան, նշվ. աշխ., էջ 781.

¹⁶ Կիրական Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, էջ 29.

¹⁷ Հմմտ. նույն տեղում, էջ 72.

¹⁸ Ն. Թաճմիզյան, նշվ. աշխ., էջ 30.

¹⁷ նույն տեղում.

¹⁸ Մ. Չամչյան, նշվ. աշխ., էջ 780—782, Ն. Թաճմիզյան, նշվ. աշխ., էջ 30—31.

է՝ V դ. կարծեցյալ Սյունեցին։ Արդ, անհասկանալի է մնում, թե անժանոթ V դ. Սյունեցու գոյութիւնն արձանագրող Գանձակեցին նույն այդ Սյունեցու առիթով, ընդամենը մի քանի տող հետո, ինչո՞ւ է հիշում 300 տարի հետո ապրած, իրեն ստուգապես հայտնի մատենագրի երկերը։ Տրամաբանական կլինե՞ր, եթե թարգմանչաց պարբերութեան մեջ մի անգամ հիշելով իրեն անժանոթ V դ. հեղինակին, Գանձակեցին այլևս շանդրադառնար նրան։ Պատմիչը, սակայն, վերադառնում է մի անգամ արդեն հիշված Սյունեցուն և վստահորեն թվարկում VIII դ. մատենագրին պատկանող երկերը։ Կարծում ենք, որ Գանձակեցին չի շփոթում երկու համանուն Սյունեցիներին, և թարգմանչաց պարբերութեան մեջ երկու անգամ հիշատակված Ստեփանոս Սյունեցի եպիսկոպոսը նույն ինքն է՝ VIII դ. մատենագիրը։

Այլ հարց է, թե Գանձակեցին VIII դ. մատենագրին ինչո՞ւ է, այնուամենայնիվ, հիշատակում V դ. թարգմանչաց շարքում։ Այս հարցին դեռ կանգրադառնանք, այժմ մի քանի խոսք V դ. կարծեցյալ Սյունեցու եպիսկոպոսութեան մասին։ Եվ Մ. Չամչյանը, և Ն. Թահմիզյանը անվերապահորեն ընդունում են V դարում այդպիսի մի եպիսկոպոսի գոյութիւնը։ Երկուսն էլ թեև չեն նշում իրենց աղբյուրը, բայց ակներևաբար նկատի ունեն Գանձակեցու վերոբերյալ, փաստորեն, ճիշտ շմեկնաբանված հատվածները։

Հայ մատենագրութեան մեջ Սյունյաց եպիսկոպոսների, նրանց հաջորդութեան միակ և ըստ ամենայնի վստահելի աղբյուրը Ստեփանոս Օրբելյանի (XIII—XIV դդ.) «Պատմութիւն նահանգին Սիսական» աշխատութիւնն է։ Նպատակ ունենալով շարադրել Սյունիքի ոչ միայն քաղաքական, այլև եկեղեցական պատմութիւնը, լինելով Սյունյաց մետրոպոլիտ, հեղինակն ինքը, բնականաբար, շահագրգռված էր առավել անսխալ իմանալու իր նախորդներին։ Անշուշտ, չենք ժխտում, որ մեկ ուրիշը, տվյալ դեպքում՝ Գանձակեցին, կարող էր ավելի ստույգ տեղեկութիւններ ունենալ հարցի մասին, եթե միայն ունենար։ Իսկ Օրբելյանն, ահա, մեզ հետաքրքրող ժամանակահատվածում (V—VI դդ.) Ստեփանոս անունով սյունեցի ոչ մի եպիսկոպոս չի հիշում։ Բերում ենք նշված ժամանակահատվածում Սյունյաց եպիսկոպոսների ցանկն ըստ Օրբելյանի¹⁹, կից տալով նաև նրանց աթոռակալման թվականներն ըստ Ղ. Ալիշանի²⁰։

Տէր Մաշտոց	369—415
Տէր Անանիա	415—458
Տէր Նուն	458—466
Տէր Գաղատ	466—483
Տէր Մուշէ	483—519

Ավելին, իր աշխատութեան 1 գլխում, թվարկելով սյունեցի մի քանի եպիսկոպոսների և հասնելով VIII դ. Ստեփանոս Սյունեցուն, Օրբելյանը կարծես հարևանցիորեն նշում է վերջինիս՝ Սյունյաց եպիսկոպոսների մեջ առաջինը Ստեփանոս անունը կրելու մասին. «Ապա բաղձալին բնաւից, արեգակն շահաւորեալ ի տանս Թորգոմեան, երանելի և մեծ նահատակն, պարծանաց զավակն և անդրանիկ որդին սուրբ և երկնահանգէտ աթոռոյս՝ Սիւնեաց՝ Ստեփաննոս»²¹։

Վերադառնանք Գանձակեցու Պատմութեանը, որի էջերում Ստեփանոս Սյունեցին հիշատակվում է մի երրորդ անգամ ևս։ Թվարկելով VIII դ. մի քանի նշանավոր վարդապետների, պատմիչը հիշում է նաև Սյունեցուն. «...և

19 Ստեփաննոս Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, հ. Բ, Փարիզ, 1859, էջ 161։

20 Ղ. Ալիշան, Սիսական, էջ 20։

21 Ստեփաննոս Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, հ. Ա, Փարիզ, 1859, էջ 173—174։

մեծն իմաստասէրն Ստեփանոս Սիւնեցի, աշակերտ Մովսիսի, զոր ի վերագոյնն յիշատակեցաւ²², ն. Թահմիզյանի կարծիքով, «զոր ի վերագոյնն յիշատակեցաւ» խոսքով Գանձակեցին ակնարկում է թարգմանչաց պարբերության մեջ երկու անգամ հիշատակված Ստեփանոս Սյունեցիներից երկրորդին միայն, քանի որ, «դիտել» է տալիս երաժշտագետը, միայն այդ երկրորդը և այս հատվածներում է Սյունեցին բնութագրվում «մեծն» ածականով²³։ Սյունեցու անունը հիշառակող առաջին հատվածում այս ածականը չկա, ուրեմն «զոր ի վերագոյնն յիշատակեցաւ»-ը չի վերաբերում այդ հատվածի Ստեփանոս Սյունեցուն. վերջինս այսպես թուանձնանում և դարձյալ «մեծն» է՝ V դարում։ Հարկ է, սակայն, նշել, որ Գանձակեցին այստեղ և այլուր «մեծն» ածականը բնավ էլ չի գործածում տարբերիչ մականունի նշանակությամբ. այն սոսկ մատնանշում է իր հերոսի նկատմամբ հեղինակի վերաբերմունքը, և պատումի բնույթն է հաճախ պայմանավորում այս և նման բառերի գործածությունը։ Եթե առաջնորդվելու լինենք ն. Թահմիզյանի դատողությամբ, Գանձակեցու աշխատության վերջին էջերում մեկ անգամ ևս հիշվող, VIII դ. հեղինակ լինելու իրողությամբ ոչ մի կասկած չհարուցող²⁴ Ստեփանոս Սյունեցին դարձյալ... ինքը չէ, այլ V դ. կարծեցյալ համանուն եպիսկոպոսը, քանի որ այստեղ ևս, ինչպես որ երաժշտագետի մատնանշած հատվածում, Սյունեցու անվան կողքին չկա «մեծն» ածականը²⁵։

Ինչ վերաբերում է «զոր ի վերագոյնն յիշատակեցաւ» խոսքին, այն, մեր կարծիքով, չի վերաբերում թարգմանչաց պարբերության մեջ հիշատակված Սյունեցիներից և ոչ մեկին։ «Վերևում հիշատակված» ոչ թե Ստեփանոս Սյունեցին է, այլ վերջինիս ուսուցիչը՝ Մովսեսը։ Ի դեպ, այս հատվածը հենց այդպես էլ թարգմանել է Վ. Առաքելյանը. «...մեծն Ստեփանոս Սյունեցի եպիսկոպոսը՝ վերևում հիշատակված Մովսեսի աշակերտը»²⁶ (ընդգծումը իմն է—Լ. Ս.)։ Բնագրի այսպիսի ըմբռնումը դուրսի է դարձնում այն հարցի լուսաբանումը, թե Կիրակոս Գանձակեցին, որոշակիորեն իմանալով VIII դ. Սյունեցու և՛ ապրած ժամանակը, և՛ ինքնությունը, ինչու է նրան հիշատակում V դ. թարգմանչաց շարքում։

Ստեփանոս Սյունեցու վարքագիծներից Ստեփանոս Օրբելյանը և Գևորգ Սյունեցի (XIII դ.) հաղորդում են, որ նա ուսումնառել է Մովսես Սյունյաց եպիսկոպոսի մոտ²⁷։ Սակայն Գանձակեցուն հայտնի չէ Ստեփանոսի ուսուցչի՝ Սյունյաց եպիսկոպոս լինելու իրողությունը. նա միայն գիտի, որ այդ ուսուցիչը կոչվել է Մովսես։ Վերջինս հայ մատենագրության մեջ ներկայանում է նաև «քերթող», նույնիսկ «քերթողահայր» պատվանուններով²⁸։ Ենթադրում ենք, որ Գանձակեցուն ծանոթ է եղել Սյունեցու ուսուցչի «Մովսես քերթող» անվանումը։ Այս ենթադրությունը հաստատվում է քանիցս հիշված «զոր ի վերագոյնն յիշատակեցաւ» խոսքով, որով, ինչպես նշել ենք, Գանձակեցին ակնարկում է Սյունեցու ուսուցչին՝ Մովսեսին։ Գանձակեցու աշխատության մեջ «վերևում հիշատակված» այլ Մովսես, որի հետ հնարավոր լինե՞ր ֆապել Սյունեցու անունը, բացի խորհնացուց, չկա։ Ուրեմն պատմիչը Սյունեցուն համարելով «աշակերտ Մովսիսի»՝ վերջինիս ընկալում է իբրև Մովսես խորհնացի՝ շփոթելով Մովսես Սյունեցի—Մովսես խորհնացի

22 Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն հայոց, էջ 72։

23 Ն. Թահմիզյան, նշվ. աշխ., էջ 30։

24 Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն հայոց, Կ. Մեխր-Օհանյանի Առաջաբանը, էջ 161։

25 Նույն տեղում, էջ 331։

26 Կիրակոս Գանձակեցի, Հայոց պատմություն, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Վարդ Առաքելյանի, Երևան, 1982, էջ 63։

27 Գ. Հովսեփյան, Մխիթար Արևիկանցի, նորագյուտ արձանագրություն և երկեր, Երևան, 1933, էջ 17։

28 Մ. Չամչեան, նշվ. աշխ., էջ 367։

մատենագիրներին: Այսպիսի շփոթն անսպասելի չէ «Մովսես քերթող» (Սյունեցի) — «Մովսես քերթող» (Խորենացի) համանունության պարագայում:

Սրանով էլ բացատրվում է Գանձակեցու կողմից VIII դ. թարգմանչին V դ. թարգմանչաց շարքում հիշատակելու փաստը: Որպես «աշակերտ Մովսիսի»՝ Սյունեցին «մուտք է գործում» V դ., բայց քանի որ Գանձակեցուն VIII դ. Սյունեցուց առաջ այլ Ստեփանոս Սյունեցի հայտնի չէ, նա ժամանակագրական այս փակուղուց «ելքը գտնում է»՝ թարգմանչաց պարբերության մեջ հիշատակված Ստեփանոս Սյունեցուն երկու դեպքում էլ «և յետոյ» ըստ երևույթի ժամանակով առանձնացնելով մյուս թարգմանիչներին:

V դ. Ստեփանոս Սյունեցու մասին տեղեկություններ հաղորդող մյուս մատենագրական աղբյուրը, որ մատնանշում է Մ. Չամչյանը, Հայսմավուրքն է, Հենց սկզբից ասենք, որ Հայսմավուրքի հաջապատասխան հաղորդումներում ակնարկ անգամ չկա որևէ Սյունեցի եպիսկոպոսի մասին: Մեսրոպ Մաշտոցին, V դ. հայ թարգմանիչներին և հայոց գրերի գյուտին նվիրված եկեղեցական տոների ընթերցվածներում ընդամենը հիշվում է թարգմանչաց շրջանի ոմն Ստեփանոս, որ մի դեպքում անվանվում է «Ստեփանոս ասողնիկ»²⁹, մյուս դեպքում՝ «Ստեփաննոս ասողնիկ պատմագիր»³⁰, ի վերջո՝ «Ասողնիկ»³¹, Մ. Չամչյանն իրավացիորեն գտնում է, որ նշված Ստեփանոսը շփոթված է մեկ ուրիշ համանուն հեղինակի՝ X դ. Ստեփանոս Ասողիկ Տարոնացի պատմագրի հետ, բայց միևնույն ժամանակ վերոբերյալ հիշատակություններից հեշտությամբ դուրս է բերում մի այլ Ստեփանոս՝ եպիսկոպոս Սյունեցի³²: Դժվար չէ տեսնել, որ այդպիսի եզրահանդման համար Հայսմավուրքի հաղորդումները որևէ հիմք չեն տալիս: Հայսմավուրքի այս հաղորդումների պատմական արժեքը գերազանցատու է նաև Ն. Թահմիզյանը, երբ դրում է. «Հայսմավուրքում... փաստորեն երեք անգամ հիշատակվում է Ստեփանոս Սյունեցի եպիսկոպոսը, երեք տարբեր ձևերով»³³,

Ասենք, որ Մ. Չամչյանը և Ն. Թահմիզյանը իրենց տեղեկությունները քաղել են Հայսմավուրքի 1730 թ. Կ. Պոլսի հրատարակությունից, որի հիմքում ընկած է Գրիգոր Մերենց խաթեցու (XV դ.) խմբագրությունը: Նկատի ունենալով, որ մինչև խաթեցին Հայսմավուրք ժողովածուներն ունեցել են մի քանի խմբագրություններ, փորձեցինք պարզել, թե ո՞ւմ ձեռքով կարող էին Հայսմավուրք թափանցել V դ. Ստեփանոս թարգմանչի մասին առաջին տեղեկությունները:

Հայսմավուրքի առաջին՝ Տեր-Իսրայել Խաչենցուն (XIII դ.) պատկանող խմբագրության ձեռագրերն իրենց համապատասխան ընթերցվածներում որևէ Ստեփանոս Սյունեցի եպիսկոպոս կամ Ստեփանոս թարգմանիչ չեն հիշատակում: Մաշտոցի անվան Մատենադարանի Տեր-Իսրայելի խմբագրությանը պատկանող ձեռագիր մի Հայսմավուրք՝ «Մեհեկի ԺԳ և փետրուարի ԺԹ, Վարք և կատարումն սուրբ հորն մերոյ Մեսրոպա վարդապետին» տոնանիշ խորագրի տակ հաղորդում է. «Իսկ նախ քան զդարձ նոցա, որք կատարեցան ի փրկիսոփայական խմաստա՝ Դաւիթ, Մովսէս, Նդնակ, Մամբրէ և այլք, վաղճան եհաս հայրապետին Սահակայ»³⁴: Սրա հետ նույնական են և Ստեփանոս թարգմանչի մասին որևէ հիշատակություն չեն բովանդակում Տեր-Իսրայելի անվամբ հայտնի այլ ձեռագրերի համապատասխան ընթերցվածները ևս³⁵: Դա բնական է, քանի որ V դ. կարծեցյալ Սյունեցու մասին հիշատակություն

²⁹ Յայսմավուրք, Կ. Պոլիս, 1730, Հոգի Ը և սեպտեմբերի Ժէ:

³⁰ Նույն տեղում, Տրէի Ժէ և նոյեմբերի ԻԾ:

³¹ Նույն տեղում, Մեհեկի ԺԳ և փետրուարի ԺԹ:

³² Մ. Չամչյան, նշվ. աշխ., էջ 781—782:

³³ Ն. Թահմիզյան, նշվ. աշխ., էջ 31:

³⁴ Մաշտոցի անվան Մատենադարան (այսուհետև՝ ՄՄ), ձեռ. № 6283, էջ 69 ր:

³⁵ Հմմտ. ՄՄ, ձեռ. № 7463, էջ 115ա, 207ա, ձեռ. № 4737, էջ 23բ, ձեռ. № 4873, էջ

շունեն նաև Տեր-Խորայելի խմբագրության համար հիմք ծառայած⁵⁸ այլ ժողովածուների (Ճաղընտիր, Տոնական) համապատասխան տոնական ընթերցվածներու: Ն⁵⁹ 8179 ձեռագիր ճաղընտիրն, օրինակ, Վարդ և կատարումն սուրբ հաւրն մերոյ և վարդապետին Մեսրոպայ խորագրի տակ հաղորդում է հենց նույն տեքստը՝ նույն անունների լիարկումով, որ մեջբերվեց վերևում:⁶⁰

Հայսմավուրքի երկրորդ խմբագրությունը հայտնի է Կիրակոս Արևելցու անունով (XIII դ.): Այս խմբագրության ձեռագրերում արդեն հիշատակվում է մի Ստեփանոս թարգմանիչ, ընդամենը, մեզ համար կարևոր է ոչ այնքան հիշատակման փաստը, որքան այս թարգմանչին հիշատակելու կերպը. «Եւ առաքեն յաշակերտաց իւրեանց ի Կոստանդնուպոլիս, և յԱթէնս... որոց էին գլխաւորք՝ Մովսէս խորենացի, և Կորիւն, և Եզնակ, և Արձան, և Յովսէփ, և Ղեւոնդ, Եղիշե, և Դաւիթ, որպէս և յետոյ Ստեփանոս»⁶¹: Տարակուս չկա, որ այս ցուցակում ևս Ստեփանոս թարգմանիչը ժամանակով առանձնացվում է մյուսներից և, որ ուշագրավ է, միևնույն ձևով («և յետոյ»): Սա չի կարող զիտվել իբրև պատահական համընկնում, մանավանդ երբ մտաբերում ենք, որ բանասիրության մեջ նույնացվում են XIII դ. Կիրակոս Գանձակեցի և Կիրակոս Արևելցի մատենագիրները⁶²: Այս պարագայում մեզ երկու կարևոր հետևություն անելու հնարավորություն է ընձեռվում. նախ՝ Հայսմավուրքն այլևս չի կարող համարվել V դ. կարծեցյալ Սյունեցու մասին տեղեկություններ հաղորդող անկախ-լրացուցիչ աղբյուր, ինչպես ջանում են ներկայացնել Մ. Զամչյանն ու Ն. Թահմիզյանը, և ապա՝ Ստեփանոս թարգմանիչ կապակցությամբ «և յետոյ» բառերի այս երրորդ գործածությունը ոչ մի կասկած չի թողնում դրանց ժամանակատարբերիչ նշանակության մասին:

Ստեփանոս թարգմանիչի մասին Կիրակոս Արևելցու հիշատակությունն ամբողջովին այլափոխվել է Հայսմավուրքի հաջորդ Գրիգոր Մերեցցե խաթեցուն պատկանող խմբագրությունում: Նախ՝ Արևելցու կողմից միայն թարգմանչաց տոնի ընթերցվածում հիշվող այս Ստեփանոսը խաթեցուն խմբագրությունում հայտնվում է նաև Մեսրոպ Մաշտոցին, հայոց գրերի գյուտին նվիրված տոնների ընթերցվածներում⁶³: Այնուհետև՝ Ստեփանոսը, որ Արևելցու մոտ հիշվում է թարգմանչաց ցուցակի վերջում՝ «և յետոյ» բառերով, խաթեցուն խմբագրության առաջին՝ թարգմանչաց տոնի ընթերցվածում հիշվում է ցուցակի մեջ (ոչ վերջում)՝ բնականաբար արդեն առանց «և յետոյ» բառերի⁶⁴: Բայց խաթեցու կողմից իր աղբյուրի՝ Արևելցու Հայսմավուրքի առավել ուշագրավ այլափոխում ենք դիտում հետևյալը. եթե Արևելցին թարգմանիչներին հիշում է միայն անուններով (բացառությամբ Մովսէս խորենացու), խաթեցին հավելում է նաև նրանց ծննդավայրը, ազգական կապը ցույց տվող մականուն-բացատրություններ, այլ մանրամասներ. «...Եւ գլխաւորք յաշակերտաց նոցա (Սահակի և Մեսրոպի—Լ. Ս.) այսոքիկ՝ սուրբն Յովսէփ և սուրբն Ղեւոնդ երէց որք ի պարս վկայեցին: Սուրբն Եղիշէ վարդապետ: Եւ Մովսէն խորենացի, և Եղբայրն Սովսէսի Մամբրէ վերծանող: Եւ Եզնակ Կողբացի...»⁶⁵: Թարգմանիչների ինքնությունը ճշգրտելու, նրանց բնու-

58p—59ա, 252բ, 323բ, ձեռ. № 4741, էջ 201ա:

59 Այս մասին տե՛ս Մ. Ավդալբեկյան, «Յայսմավուրք» ժողովածուները և նրանց պատմագրական արժեքը, Երևան, 1982, էջ 63—67:

60 Տե՛ս ՄՄ, ձեռ. № 8179, էջ 159ա:

61 ՄՄ, ձեռ. № 7530, էջ 40ա:

62 Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն հայոց, Կ. Մելիք-Օհանջանյանի Առաջարանը, էջ Բ—ԺԱ, Ա. Սրապյան, Բանասիրական ճշգրտումներ (Պատմա-բանասիրական հանգես, 1972, № 4, էջ 137—145): Մ. Ավդալբեկյան, նշվ. աշխ., էջ 68:

40 Հմմտ. Յայսմավուրք, Տրէի Ժէ և Նոյեմբերի ԻԵ, Մհհկի ԺԳ և փետրվարի ԺԲ:

41 Նույն տեղում, Հոռի ԹԸ և սեպտեմբերի ԺԷ:

42 Նույն տեղում:

թափարելու այս մղումով հասնելով Արևելցու հիշած Ստեփանոսին, ինքնին անծանոթ այս թարգմանչին ընթերցողի համար «պարզ» է դարձնում «Ստեփանոս ասողնիկ»⁴³ հորջորջումով՝ ակներևաբար շփոթելով, ինչպես արդեն նշվել է, X դ. Ստեփանոս Ասողիկ Տարոնացի պատմագրի հետ։ Շփոթն ավելի է խորանում հաջորդ՝ գրերի գյուտին նվիրված տոնի ընթերցվածում, որտեղ ավելի են ընդարձակվում թարգմանիչների ինքնությունը ցույց տվող բացատրությունները, և Ստեփանոս թարգմանիչն էլ կնքվում է «Ստեփանոս ասողնիկ պատմագիր» անունով։ Այսպես, ինքնին ձեռքով հայտնվում է թարգմանչաց շրջանի ոմն «Ստեփանոս ասողնիկ պատմագիր», «Ստեփանոս ասողնիկ», որը և բանասիրության մեջ դառնում է այլազան ենթադրությունների առարկա⁴⁴։

Մյուս մատենագիրը, որին վկայակոչում է Մ. Չամչյանը, Ղազար Ջահկեցին է։ Վերջինս «Դրախտ ցանկալի» գրքում տալիս է հայ մատենագիրների մի ցանկ, որտեղ V դ. մատենագիրների շարքում հիշվում է մի Ստեփանոս Սյունեցի⁴⁵։ Անմիջապես ասենք, որ այս ցանկի մասնավորապես V դ. վերաբերող հատվածը, մատենագիրների հերթականության շնչին փոփոխություններով, նա քաղել է Գանձակեցու Պատմությունից։

ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆՁԱԿԵՑԻ

ՂԱԶԱՐ ՋԱՀԿԵՑԻ

Մովսէս

Մովսէս

Կորիւն

Դաւիթ

Եղիշէ

Կորիւն

Ղազար

Եղիշէ

Եզնակ

Ղազար

Դաւիթ

Մամբրէ

Մամբրէ

Ստեփանոս⁴⁷Ստեփանոս⁴⁸

Ավելացնենք, որ այս ցանկը ներկայացնելուց առաջ և հետո Ջահկեցին ամբողջ էջեր ևս քաղում է Գանձակեցուց, ավելի ստույգ՝ արտագրում⁴⁹։ Այս պարագայում բնականաբար Ջահկեցին նույնպես չի կարող V դ. կարճեցյալ Սյունեցու մասին անկախ-ըրացուցիչ աղբյուրի նշանակություն ունենալ, և պարզապես թյուրիմացություն է նրան վկայակոչելը։ Ն. Թահմիզյանն էլ է Ջահկեցուն համարում անկախ աղբյուր։ «Ջահկեցին ևս խարխալում է»,—գրում է երաժշտագետը⁵⁰։ Նենթադրելով, որ Ջահկեցին ոչ թե խարխալում, այլ պարզապես կրկնում է Գանձակեցուն⁵⁰։

⁴³ Նույն տեղում։

⁴⁴ Ն. Թահմիզյանն, օրինակ, ամբողջ շարք ենթադրություններ է անում V դ. կարճեցյալ Սյունեցու «Ասողիկ» մականվան մասին՝ չենթադրելով միայն, որ մականունը մի պարզ շփոթի հետևանքով է հայտնվել ինքնին Ղազար Ջահկեցու հիշել այս Հայամավորքի՝ պատմական ոչ լիարժեք աղբյուր լինելու վերաբերյալ Մ. Ավագբյանի կարծիքը, որը նշում էր նրանում «բազում ինչ աւելորդ» լինելու մասին (տե՛ս Մ. Ավագբյան, Լրումն լիակատար վարուց եւ վկայաբանութեանց սրբոց, հ. ԺԱ, Վենետիկ, 1814, էջ 22)։

⁴⁵ Պարզ Աստուածաբանական որ կոչի Դրախտ ցանկալի, շարադրեալ ի Ղազար Ջահկեցի, աստուածաբան վարդապետ է Ջահկեցու (այսուհետև՝ Ղազար Ջահկեցի), Կ. Պոլիս, 1735, էջ 624—625։

⁴⁶ Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն հայոց, էջ 28—29։

⁴⁷ Ղազար Ջահկեցի, էջ 620—625։

⁴⁸ Հմմտ. Նույն տեղում, էջ 620, 645։

⁴⁹ Ն. Թահմիզյան, Նշվ. աղբ., էջ 50։

⁵⁰ Իր աղբյուրից բառացի օգտվելու մի փաստ է նաև հետևյալը. Գանձակեցին իր աշխատության մեջ թվարկելով V դ. թարգմանիչներից մի քանիսի ինքնուրույն երկերը, պարբերություններ ավարտում է VIII դ. Ստեփանոս Սյունեցու մատենագրական երկերը հիշատակելով։

Վեոօին պատմական աղբյուրը, որն իբր տեղեկություններ է հաղորդում V դ. կարծեցյալ Սյունեցու մասին, Թովմա Մեծոփեցու «Պատմութիւն Հանկ-Թամուրայ և յաջորդաց իւրոց» երկն է, որտեղ տրված է եկեղեցու «սուրբ Թամուրայ և յաջորդաց իւրոց» մի ցուցակ, որի մեջ նախ հիշվում են համաքրիստոնեական վարդապետաց՝ մի ցուցակ, որի մեջ նախ հիշվում են համաքրիստոնեական նշանակության մի քանի աստվածաբաններ, ապա «սուրբ աստվածաբաններից»՝ Ստեփանոս Սյունեցին, Անանիա Շիրակացին, Պողոս Տարոնացին, Հովհանն, Սարգիս Հաղպատեցին, Դավիթ փիլիսոփան, Մովսես Քերթնոզայրը, Ասողիկ Թարգմանիչը (թվարկում ենք բնագրային հերթականությամբ)։ Ինչպես երևում է, Մեծոփեցու կողմից աստվածաբանները հիշվում են ամենևին էլ ոչ ժամանակագրական կարգով։ Պողոս Տարոնացուց (XII դ.) հետո են հիշվում, օրինակ, V—VI դդ. մատենագիրներ Դավիթ փիլիսոփան ու Մովսես Քերթնոզայրը, ուրեմն՝ առաջինը Ստեփանոս Սյունեցու անվան հիշատակությունից բնավ չի ենթադրվում, թե նա ժամանակագրական առումով նախորդում է թվարկված մյուս աստվածաբաններին և կարող է համարվել V դ. աստվածաբան։ V դ. Ստեփանոս Սյունեցու գոյության վերաբերյալ Մ. Չամչյանի տեսակետին չի կարող նպաստել նաև այդ ցուցակում Ասողիկ Թարգմանիչի հիշատակությունը։ Նախ՝ անհնար է այդ հիշատակությունից Ստեփանոս Սյունեցի մականբերել, երկրորդ՝ Ստեփանոս Թարգմանիչի Ասողիկ մականունը, ինչպես արդեն ցույց ենք տվել, թյուրիմացության արդյունք է և գալիս է հլաթեցու Հայսմավուրբից։

Ամփոփենք։ Մ. Չամչյանի նշած պատմական աղբյուրներից երեքը՝ Գանձակեցու, Զահկեցու աշխատություններն ու Հայսմավուրբը, որոնք տեղեկություններ են հաղորդում V դ. կարծեցյալ Սյունեցու մասին, փաստորեն անկախ աղբյուրներ չեն։ Դրանց ակունքը նույնն է՝ Գանձակեցին, իսկ վերջինիս կողմից V դ. Թարգմանչաց շարքում VIII դ. Ստեփանոս Սյունեցու հիշատակությունը պայմանավորված է Մովսես Սյունեցի-Մովսես Խորենացի շփոթով։ V դ. Սյունեցու գոյության օգտին ոչ մի նոր բան չի ավելացնում նաև Թովմա Մեծոփեցին։ Թերևս այսքանն արդեն բավական էր ժխտելու V դ. Ստեփանոս Սյունեցի Թարգմանիչի և շարականագրի գոյությունը, բայց մենք, այնուամենայնիվ, առայժմ այդ անում ենք որոշ վերապահությամբ, նկատի ունենալով, որ Ն. Թահմիզյանի հիշված հոդվածում հօգուտ V դ. Սյունեցու գոյության բերված են մի քանի լրացուցիչ փաստարկներ, որոնց կանգրադատանք մի ուրիշ անգամ։

որին անմիջապես հետևում է Թարգմանչաց կողմից հորինված հոգևոր Երգերի թվարկումը՝ «Արարիկ և ևրդա շարականաց քաղցր և գեղեցիկ եղանակաւ...» և այլն (Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն հայոց, էջ 29)։ Զահկեցին բառացի կրկնում է նույնը, սխալմամբ իր աղբյուրի «արարիկ» հոգևոր բայը ընկալելով եզակի՝ «արար» և Թարգմանչաց վերադրվող բոլոր հոգևոր երգերը հատկացնում է Ստեփանոս Սյունեցուն. «Երգեաց և երգա շարականաց քաղցր և գեղեցիկ եղանակաւ...» և այլն (Ղաղար Զահկեցի, էջ 625)։ Բանասերներից Մ. Գրիգորյանը Զահկեցու այս հաղորդումը գտնում է հավանական, իսկ Ն. Թահմիզյանը, տեսնելով V դ. ստեղծված հոգևոր երգերի մասին Գանձակեցու և Զահկեցու հաղորդումների նմանությունը, չի նկատում նրանց նույնությունը (հմտ. Մ. Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 43—44, ն. Թահմիզյան, նշվ. աշխ., էջ 38)։ Այնուհետև նա «կիսում է» Մ. Գրիգորյանի կարծիքն առ այն, որ Սյունեցին գուցե «ոչ թե գրեր, այլ կարգեր, շարեր է, կանոնի վերածեր... տեներու և սուրբերու շարականները» (Մ. Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 44)։ Սկզբնաղբյուրի սխալ ընկալման վրա հիմնված Զահկեցու այս տեղեկությունները, ինչպես նաև դրանցից բխող ենթադրությունները պետք է, սակայն, մերժել։

51 Թովմա Մեծոփեցի, Պատմութիւն Հանկ-Թամուրայ և յաջորդաց իւրոց, Փարիզ, 1860, էջ 38։

МНИМЫЙ СТЕПАНОС СЮНЕЦИ—ШАРАҚАНОПИСЕЦ V ВЕКА

Л. Г. САРКИСЯН

Р е з ю м е

М. Чамчян, ссылаясь на ряд библиографических сведений, среди имен переводчиков V в. упоминает Степаноса Сюнеци, жившего в VIII в. Его точку зрения разделяли некоторые филологи—последователи Чамчяна. Однако указанные Чамчяном труды Киракоса Гандзакеци, Казара Джажкеци и Айсмавурк не являются самостоятельными—их источник один и тот же—Гандзакеци. Упоминание Гандзакеци имени Степаноса Сюнеци как автора V в. могло быть вызвано сходством имен Мовсеса Сюнеци и Мовсеса Хоренаци. О Сюнеци как авторе V в. нет сведений и в «Истории» Товма Мсцопеци.